ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Հ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան,

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 75-րդ և «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 47-րդ և 50-րդ հոդվածներով՝ օրենսդրական նախաձեռնության կարգով Ձեզ եմ ներկայացնում «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

Առաջադրվող ՀՀ օրենքի նախագծին կից ներկայացնում եմ նաև՝

1) օրենքի ընդունման հիմնավորումը.

2) օրենքի ընդունման առնչությամբ այլ օրենքների ընդունման անհրաժեշտության բացակայության մասին տեղեկանքը.

3) օրենքում փոփոխվող հոդվածները:

Խնդրում եմ ներկայացված ՀՀ օրենքի նախագիծը սահմանված կարգով դնել շրջանառության մեջ:

Պատգամավոր՝ Հ. Աբրահամյան (042)

Լրամշակված նախագիծ

Պ-005-18.06.2012-ՊԻ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի փետրվարի 20-ի ՀՕ-308 օրենքի (այսուհետ՝ օրենք) 25-րդ հոդվածի 6.1-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ

«6.1. Եթե խմբակցության, պատգամավորական խմբի անդամների ընդհանուր թիվը փոքր է մշտական հանձնաժողովների ընդհանուր թվից, ապա խմբակցությունը, պատգամավորական խումբն իրավունք ունի իր անդամին ներկայացնելու մեկից ավելի մշտական հանձնաժողովի կազմում ընդգրկվելու համար: Այդ դեպքում խմբակցությունը, պատգամավորական խումբը յուրաքանչյուր մշտական հանձնաժողովում կարող է ունենալ ոչ ավելի, քան մեկ պատգամավոր, իսկ նույն պատգամավորը կարող է լինել ոչ ավելի, քան երեք մշտական հանձնաժողովի անդամ:»:

Հոդված 2. Օրենքի 29-րդ հոդվածի 5.1-րդ մասում «երկու» բառը փոխարինել «մեկից ավելի» բառերով:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

<<ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Օրենքի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ խորհրդարանական ընտրությունների արդյունքում խմբակցությունը կամ պատգամավորական խումբը կարող է ներկայացված լինել անդամների այնպիսի քանակով, որ չկարողանա մասնակցել ԱԺ բոլոր 12 հանձնաժողովների աշխատանքներին, որոնք ստեղծված են ՀՀ Սահմանադրությամբ սահմանված հանձնաժողովների առավելագույն քանակով: <Ազգային ժողովի կանոնակարգ> ՀՀ օրենքի գործող խմբագրությունը հնարավորություն է ընձեռում խմբակցություններին և պատգամավորական խմբերին միևնույն անդամին ներկայացնել առավելագույնը 2 հանձնաժողովում: Մինչդեռ հնարավոր է իրավիճակ, երբ անգամ երկու հանձնաժողովում ներկայացված լինելու արդյունքում, խմբակցությունը ԱԺ բոլոր մշտական հանձնաժողովներում ներկայացված չլինի: Այս նախագիծը հնարավորություն է ընձեռում, որպեսզի խմբակցության /խմբի/ անդամը կարողանա մասնակցել ԱԺ մինչև 3 հանձնաժողովների աշխատանքներին:

ՏԵՂԵԿԱՆՔ
<<ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՕՐԵՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ

<Ազգային ժողովի կանոնակարգ> ՀՀ օրենքում լրացում կատարելու մասինե ՀՀ օրենքի նախագծի ընդունման առնչությամբ այլ օրենքների ընդունման անհրաժեշտությունը բացակայում է:

ՏԵՂԵԿԱՆՔ

Ազգային ժողովի կանոնակարգե ՀՀ օրենքի փոփոխվող հոդվածն է՝ 25:

ՀՈԴՎԱԾ 25. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՐԳԸ

1. Մշտական հանձնաժողովներից յուրաքանչյուրի թվաքանակը հավասար է պատգամավորների ընդհանուր թվի շուրջ 1/ՄՀ-ին, որտեղ ՄՀ-ն մշտական հանձնաժողովների ընդհանուր թիվն է:
2. Հանձնաժողովի կազմը պետք է արտահայտի խմբակցությունների, պատգամավորական խմբերի եւ դրանց կազմում չընդգրկված պատգամավորների թվական հարաբերակցությունները:
3. Մշտական հանձնաժողովներում պատգամավորներն ընդգրկվում են իրենց դիմումի համաձայն:
4. (4-րդ մասն ուժը կորցրել է 30.04.09 ՀՕ-113-Ն օրենք)
5. Խմբակցության, պատգամավորական խմբի անդամները հանձնաժողովների կազմում ընդգրկվում են խմբակցության, պատգամավորական խմբի ներկայացմամբ.
6. Խմբակցությունը, պատգամավորական խումբը յուրաքանչյուր հանձնաժողովում ունի առնվազն մեկ պատգամավոր ներկայացնելու իրավունք:
6.1. Եթե խմբակցության, պատգամավորական խմբի անդամների ընդհանուր թիվը փոքր է մշտական հանձնաժողովների ընդհանուր թվից, ապա խմբակցությունը, պատգամավորական խումբն իրավունք ունեն իր անդամին ներկայացնելու ոչ ավելի, քան երկու մշտական հանձնաժողովի կազմում ընդգրկվելու համար՝ յուրաքանչյուր մշտական հանձնաժողովում ունենալով մեկական պատգամավոր:
7. Ազգային ժողովի նախագահը եւ նրա տեղակալները, ինչպես նաեւ խմբակցությունների եւ պատգամավորական խմբերի ղեկավարները կարող են իրենց ցանկությամբ չընդգրկվել մշտական հանձնաժողովների կազմում:
8. Խմբակցությունները, պատգամավորական խմբերն իրավունք ունեն փոխելու հանձնաժողովներում ընդգրկված իրենց անդամներին:

(25-րդ հոդվածը փոփ. 24.12.04 ՀՕ-69-Ն, 26.02.07 ՀՕ-111-Ն, 26.05.08 ՀՕ-60-Ն, 30.04.09 ՀՕ-113-Ն, 19.03.12 ՀՕ-111-Ն օրենքներ)